ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«15» հոկտեմբերի 2026 թվականի N 83-Լ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին.
2) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 100-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
3) Չարենցավան համայնքի 2026 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին.
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2004 թվականի մարտի 26-ի թիվ 3/11 որոշման 2-րդ կետում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին.
5) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող ավտոմեքենաները աճուրդային կարգով օտարելու մասին.
6) «ՍՈՒԼԻՁՈՐ-3» ՍՊԸ-ի կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով Արզականի մարմարի հանքավայրի Սուլիձոր տեղամասում կատարվելիք օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին համաձայնություն տալու մասին.
7) Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն Յուրիկ Մայիսի Հարությունյանին ուղղակի վաճառքով օտարելու մասին
8) Չարենցավան համայնքի կարիքների համար ֆինանսական վարձակալությամբ /լիզինգով/ տեխնիկա ձեռք բերելուն համաձայնություն տալու մասին.
9) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի գումարման օրը սահմանելու մասին

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ
Գրիգորյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մալխասյան Նորիկ
Մակինյան Վարդան
Շահգալդյան Հակոբ
Պալյան Գարիկ
Պետրոսյան Ավետիք
Պողոսյան Մնացական
Սահակյան Գառնիկ
Ստեփանյան Գարիկ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«15» հոկտեմբերի 2026 թվականի N 84-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել Չարենցավան համայնքի 2026 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին համայնքի ղեկավարի հաղորդումները (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 **դեմ-0** **ձեռնպահ-10**

Բաբայան Արայիկ	**Բաղդասարյան Սահակ**
Գևորգյան Գևորգ	**Գալստյան Արթուր**
Դավթյան Կարեն	**Գրիգորյան Գևորգ**
Եփրեմյան Բաբկեն	**Թադևոսյան Նունե**
Մակինյան Վարդան	**Խաչատրյան Արշակ**
Շահգալդյան Հակոբ	**Հարոյան Լիլիթ**
Պետրոսյան Ավետիք	**ՂամբարյանԳարիկ**
Պողոսյան Մնացական	**Մալխասյան Նորիկ**
Ստեփանյան Գարիկ	**Սահակյան Գառնիկ**
Վարդանյան Սարգիս	**Պալյան Գարիկ**
Վարդանյան Նորայր	
Վարդանյան Սևակ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 15
Ք.Չարենցավան

Հավելված
Չարենցավան համայնքի ավագանու
2026 թվականի հոկտեմբերի 15-ի
N 84-Ա որոշման



ՀԱՂՈՐԴՈՒՄ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ

Չարենցավան համայնքի 2026 թվականի վարչական բյուջեի երրորդ եռամսյակի եկամտային մասով նախատեսված փաստացի եկամուտը կազմել է **1 482 990.9** հազար դրամ, որը տարեկան ճշտված պլանի նկատմամբ **2 217 374.0** հազար դրամ) կատարվել է **66.9 %**-ով (տե՛ս հատված 1):

Ըստ հարկատեսակների կատարողականը ունի հետևյալ տեսքը.

Գույքային հարկեր անշարժ գույքից փաստացի եկամուտը կազմել է 97 631.2 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի տվյալ եկամուտների պլանի 41.8 %-ը, իսկ փաստացիի նկատմամբ կատարվել է 6.6 %-ով:

Գույքային հարկեր այլ գույքից (փոխադրամիջոցների) գծով փաստացի եկամուտը կազմել է 126157.9 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի տվյալ եկամուտների պլանի 46.9 %-ը, իսկ փաստացիի նկատմամբ կատարվել է 8.5 %-ով:

Տեղական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 26 910.8 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի տվյալ եկամուտների պլանի 106.7 %-ը, իսկ փաստացիի նկատմամբ կատարվելով 1.8 %-ով:

Պետական տուրքերի գծով փաստացի եկամուտը կազմել է 6 097.3 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի տվյալ եկամուտների պլանի 58 %-ը, իսկ փաստացիի նկատմամբ կատարվելով 0.4 %-ով:

Պետական բյուջեից ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ ստացված կառավարման այլ մակարդակներից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող ***դոտացիայի*** մասով ճշտված պլանով նախատեսված 1 358 164.8 հազար դրամի դիմաց հատկացվել է 1012393.9 հազար դրամ:

Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ հոդվածի ճշտված պլանով նախատեսված 622 .542 հազար դրամի դիմաց հատկացվել է 622.542 հազար դրամ, **իսկ նպատակային հատկացումներ /սուբվենցիաներ/**-ի մասով ճշտված պլանով նախատեսված 5 447.1 հազ. դրամի դիմաց հատկացվել է 8 294.0 հազար դրամ՝ որն ուղղվել է ազգային, լարային, փողային նվագարանների ուսուցման համար:

Գույքի վարձակալությունից եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 16 606.7 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի ճշտված պլանով եկամուտների 59.6 %-ը, իսկ տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 1.1 %-ով:

Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտները կազմել է 641.7 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 32.1 %-ը:

Վարչական գանձումներից փաստացի եկամուտը կազմել է 146 957.1 հազար դրամ, որը կազմում է վարչական բյուջեի եկամուտների 60.5 %-ը, տարեկան պլանի նկատմամբ կատարվել է 9.9 %-ով:

Տույժերից և տուգանքներից փաստացի եկամուտը կազմել է 2 164.5 հազար դրամ, տարեկան ճշտված պլանի նկատմամբ կատարվելով 216.4 %-ով:

Այլ եկամուտների գծով փաստացի եկամուտը կազմել է 38 513.3 հազար դրամ, ճշտված պլանով եկամուտների նկատմամբ կազմելով 94.7 %:

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը հաշվետու ժամանակաշրջանում կազմում են 109281.0 հազար դրամ, ճշտված պլանի նկատմամբ կազմելով 22.2 %:

Ծախսերի գծով կատարողականը ունի հետևյալ տեսքը .

Հաշվետու ժամանակաշրջանում փաստացի ծախսը կազմել է **1 391 198.7** հազար դրամ, տարեկան պլանի նկատմամբ ***2 222 691.0 հազար դրամ/*** այն կատարվել է 62□6 % -ով (տես հատված 2):

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների հատվածով ֆինանսավորվել է 416 673.3 հազար դրամ, տարեկան ճշտված պլանի նկատմամբ կազմել է 73.8 %, իսկ վարչական բյուջեի փաստացի ծախսերի նկատմամբ կազմում է 30 %-ը:

Տնտեսական հարաբերություններ հատվածով ֆինանսավորվել է 48 721.6 հազար դրամ, որը ճշտված պլանի նկատմամբ կազմում է 80.3 %, իսկ տարեկան փաստացի ծախսերի նկատմամբ 3.5 %:

Շրջակա միջավայրի պաշտպանության համար փաստացի կատարված ծախսերը կազմել են 165 714.4 հազար դրամ, որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 80.2 %, իսկ տարեկան փաստացի ծախսերի նկատմամբ՝ 12 %:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության համար փաստացի կատարված ծախսերը կազմել են 26 610.9 հազար դրամ, որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 63.5 %, իսկ տարեկան փաստացի ծախսերի նկատմամբ՝ 2 %:

Հանգիստ, մշակույթ և կրոն ոլորտի պահպանման համար փաստացի կատարված ծախսերը կազմել են 45 232.9 հազար դրամ, որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 50.9 %, իսկ վարչական բյուջեի փաստացի ծախսերի նկատմամբ՝ 3.2 %:

Նախադպրոցական կրթություն հոդվածի պահպանման համար փաստացի կատարված ծախսերը կազմել են 368 911.6 հազար դրամ, որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 66,8 %, իսկ վարչական բյուջեի փաստացի ծախսերի նկատմամբ ՝ 26.5 %:

Բարձրագույն կրթության հատվածի փաստացի ծախսը կազմել է 7 860.0 հազար դրամ՝ որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 49,1 %:

Արտադպրոցական դաստիարակություն հոդվածի պահպանման համար փաստացի կատարված ծախսերը կազմել են 296 789.6 հազար դրամ, որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 77.2 %, իսկ տարեկան պլանի նկատմամբ՝ 21,3 %:

Կրթություն այլ դասերին չպատկանող հոդվածի փաստացի ծախսը կազմել է 1750□0 հազար դրամ՝ որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 100 %:

Սոցիալական պաշտպանություն հատվածի փաստացի կատարված ծախսերը կազմել են 12 934.4 հազար դրամ, որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 74.3 %:

Ընթացիկ ծախսերից՝ աշխատանքի վարձատրության հոդվածի փաստացի կատարված ծախսերը կազմել են 279 189.7 հազար դրամ որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 75.6 %:

Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման հոդվածի փաստացի կատարված ծախսերը կազմել են 151 476.6 հազար դրամ որը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 53.2 %:

Սուբսիդիաների տեսքով ոչ ֆինանսական համայնքային կազմակերպություններին փաստացի ֆինանսավորվել է 789 489.4 հազար դրամ, իսկ ոչ ֆինանսական ոչ համայնքային կազմակերպություններին փաստացի ֆինանսավորվել է 24 834.9 հազար դրամ:

Դրամաշնորհներ հատվածի փաստացի կատարված ծախսերը կազմել են 96 953.9 հազար դրամ, որից ***ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների ոչ առևտրական կազմակերպություններին*** հոդվածով հատկացվել է 93 953.9 հազար դրամ, իսկ ***այլ կապիտալ դրամաշնորհներ*** հոդվածով հատկացվել է 3000.0 հազար դրամ:

Հաշվետու ժամանակաշրջանում համայնքային բյուջեից **411 537.1** հազար դրամն ուղղվել է ***ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի*** ֆինանսավորմանը (տե՛ս հատված 3):

- Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում հոդվածով ֆինանսավորվել է 373 505.9 հազար դրամ
- Տրանսպորտային սարքավորում հոդվածով ֆինանսավորվել է 18 000.0 հազար դրամ

- Վարչական սարքավորումներ հոդվածով ֆինանսավորվել է 5 975.6 հազար դրամ
- Այլ մեքենաներ և սարքավորումներ հոդվածով ֆինանսավորվել է 1 695□0 հազար դրամ

- Աճեցվող ակտիվներ հոդվածով ֆինանսավորվել է 1 706.6 հազար դրամ

- Ոչ նյութական հիմնական միջոցներ հոդվածով ֆինանսավորվել է 380.0 հազար դրամ

- նախագծահետազոտական ծախսեր հոդվածով ֆինանսավորվել է 10 274.0 հազար դրամ

Չարենցավան համայնքի բյուջեի պակասուրդը (դեֆիցիտը) կազմել է 207482.6 հազար դրամ (տե՛ս հատված 4): Պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորմանն է ուղղվել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 207482.6 հազար դրամ (տե՛ս հատված 4, 5), իսկ հաշվետու ժամանակաշրջանի վերջում բյուջեի հավելուրդը կազմել է 59920.8 հազար դրամ:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ **Գ. ԱՖՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«15» հոկտեմբերի 2026 թվականի N 85-Ն

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 100-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Չարենցավան համայնքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 100-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

/հազ. դրամ/

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
05	1	1	Աղբահանում	4213	5696,69	-5696,69	0	0
				4637	89455,310	5696,69	0	95152,0

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ

Գրիգորյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մալխասյան Նորիկ

Մակինյան Վարդան

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Ստեփանյան Գարիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«15» հոկտեմբերի 2026 թվականի N 86-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 90-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. *ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ 25722,0 ՀԱԶ. ԴՐԱՄ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼ՝*

Բաժին	Խումբ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
01	1	1	Օրենսդիր և գործադիր մարմիններ	4214	2382,0	800,0	0	3182,0
01	6	1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող/	4237	500,0	500,0	0	1000,0
05	1	1	Աղբահանում	4637	95152,0	22182,0	0	117334,0
06	1	1	Բնակարանային շինարարություն	4729	0	400,0	0	400,0
09	1	1	Նախադպրոցական կրթություն	4511	551928,2	860,0	0	552788,2
09	5	1	Արտադպրոցական դաստիարակություն	4511	384266.7	980.0	0	385246.7
11	1	2	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ	4891	287580.836	25722,0	0	261858,836

2. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր

Գևորգյան Գևորգ

Գրիգորյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մալխասյան Նորիկ

Մակինյան Վարդան

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Ստեփանյան Գարիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N 87-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ԹԻՎ 3/11 ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2004 թվականի մարտի 26-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կազմակերպության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 3/11 որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ
Գրիգորյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մալխասյան Նորիկ

Մակինյան Վարդան

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Ստեփանյան Գարիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 15

Ք.Չարենցավան

Կազմված է ----------թ. և բաղկացած է-----թերթից
Տպագրված է ընդամենը 3 օրինակ
Օրինակ
Գրանցված է
Հայաստանի Հանրապետության
Իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի տարածքային բաժնի
կողմից _____
գրանցման թիվ _____
ՀՎՀՀ _____
«___»___ ___2026թ. գրանցված կանոնադրություն
թիվ _____ փոփոխությունը գրանցվել է՝
ՀՀ Արդարադատության նախարարության
Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից «___ » _____ 2026թ.

Հավելված
Հաստատված է՝
Չարենցավան համայնքի ավագանու

15 հոկտեմբերի 2026թ

թիվ 87-Լ որոշմամբ

Համայնքի ղեկավար՝ ----------

Հ. Շահգալդյան
15 հոկտեմբերի 2026թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄՇԱԿՈՒՅԹ»
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

Կոտայքի մարզ, Չարենցավան համայնք 2026թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «ՄՇԱԿՈՒՅԹ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ համայնքային կազմակերպություն) ստեղծվել է Չարենցավանի քաղաքապետի 2004թ. մարտի 22-ի «Համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» թիվ 50 և Չարենցավան համայնքի ավագանու 2004թ. մարտի 26-ի թիվ 3/11 որոշումների՝ «Մշակույթ» բյուջետային հիմնարկի վերակազմակերպման միջոցով, և հանդիսանում է նրա իրավահաջորդը: **Կազմակերպությունը** շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

1.2 Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքով (այսուհետ՝ Օրենք), ՀՀ իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ: **Կազմակերպությունն** իր անունից ձեռք է բերում և իրականացնում է գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

1.3 Կազմակերպությունը կարող է ունենալ ՀՀ զինանշանի պատկերով և իր հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով կլոր կնիք, իր անվամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

1.4 Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

1.5 Կազմակերպության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի (լուծարման մասին պետական գրանցման մատյանում) պահից:

1.6 Կազմակերպության անվանումն է՝

- ***Հայերեն լրիվ:*** ***«ՄՇԱԿՈՒՅԹ» Համայնքային Ոչ Առևտրային Կազմակերպություն***
- ***Հայերեն կրճատ:*** ***«ՄՇԱԿՈՒՅԹ» ՀՈԱԿ***
- ***Ռուսերեն լրիվ:*** ***„КУЛЬТУРА" Общинная Некоммерческая Организация***
- ***Ռուսերեն կրճատ:*** ***„КУЛЬТУРА" ОНКО***
- ***Անգլերեն լրիվ:*** ***„CULTURE" Community Non-Commercial Organization***
- ***Անգլերեն կրճատ:*** ***„CULTURE" C.N.C.O.***

1.7 Կազմակերպության գտնվելու վայրը՝

2501, ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան, Կ. Դեմիրճյանի անվան հրապարակ, 2

2.ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպության գործունեության հիմնական տեսակներն են՝

1. Քաղաքի կանաչ տարածքների խնամք ու պահպանում
2. Արտաքին էլ լուսավորության սպասարկում
3. Ոռոգման ցանցի վերանորոգում և շահագործում
4. Հեղեղատարների մաքրում, վերանորոգում և շահագործում
5. Շատրվանների սպասարկում և շահագործում
6. Հուշարձանների խնամք ու պահպանում
7. Հուղարկավորության աշխատանքների կազմակերպում, գերեզմանատների խնամք և պահպանում
8. Պայքար թափառող կենդանիների դեմ
9. Համայնքի տարածքի սանիտարական մաքրման աշխատանքներ

2.2 Կազմակերպությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն: Կազմակերպությունն ունի օրենքով չարգելված գործունեության ցանկացած տեսակներ իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրում է այդ գործունեության հետ կապված քաղաքացիական պարտականություններ:

2.3 Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվություն) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից, կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Կազմակերպությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Կազմակերպությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

2.4 Կազմակերպության իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով սահմանված կարգով:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող գույքից:

3.2 Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին (և կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:

3.3 Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

4. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ

4.1 Հիմնադիրը կարող է համայնքային կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել ցանկացած գույք:

4.2 Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից Կազմակերպությանն ամրացված գույքը:

4.3 Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

4.4 Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը համայնքի անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում Կազմակերպության ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

4.5 Հիմնադրի կողմից Կազմակերպությանը ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ Կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

5. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

5.1 Կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը՝ Չարենցավան համայնքը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

5.2 Հիմնադիրը՝ համայնքի ղեկավարը.

ա) ապահովում է Կազմակերպության բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրա չկատարման կամ ոչ պատշաճ իրականացման համար,

բ) վերահսկողություն է սահմանում Կազմակերպությանը ամրացված համայնքի սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման և պահպանության նկատմամբ,

գ) վերահսկողություն է իրականացնում Կազմակերպության սեփականության պահպանման նկատմամբ և համաձայնություն է տալիս գույքի օգտագործման կամ վարձակալության հանձնման համար:

5.3 Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին՝ օրենքով սահմանված կարգով, նշանակում և ազատում է հիմնադիրը:

5.4 Կազմակերպության տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, ստորագրում է հիմնադիրը: Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները հիմնադրի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման բոլոր հիմքերը և այլ դրույթներ, որոնք պայմանավորվող կողմերը անհրաժեշտ կգտնեն: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել ՀՀ օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

5.5 Կազմակերպության տնօրենն օրենքով, հիմնադրի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

5.6 Կազմակերպության տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս Կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ,

բ) ՀՀ օրենսդրությամբ հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է Կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

գ) Կազմակերպության գործադիր մարմնի պաշտոնում նշանակված անձը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով համայնքային կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառված վնասի համար,

դ) տալիս է Կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր,

ե) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում Կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում է կարգապահական տույժեր,

զ) սահմանում է Կազմակերպության կառուցվածքը,

է) սահմանված կարգով հիմնադրին է ներկայացնում Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

ը) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը, իրականացնում է ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

5.7 Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի ՀՀ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները, հրահանգները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

5.8 Կազմակերպության աշխատողների իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, աշխատանքային պայմանագրով, աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

6.1 Կազմակերպությունն անժամկետ անհատույց օգտագործման իրավունքով օգտագործում է (տիրապետում է) իրեն ամրացված գույքը:

6.2 Կազմակերպության գույքը և ֆինանսական միջոցները ձևավորվում են.

ա) համայնքի տրամադրած միջոցներից,

բ) իրավաբանական անձանց նվիրատվություններից,

գ) դրամաշնորհներից,

դ) ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ միջոցներից:

7. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

7.1 Կազմակերպության տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը, հաշվետվությունները և հաշվեկշիռը հաստատում է հիմնադիրը:

7.2 Կազմակերպության ֆինանսական միջոցները մուտքագրվում են կազմակերպության հաշվարկային հաշիվ:

7.3 Կազմակերպության ֆինանսական միջոցները գտնվում են իր տրամադրության տակ և բռնագանձման ենթակա չեն, բացի օրենքով սահմանված դեպքերից:

7.4 Կազմակերպությունում հաշվապահական և վիճակագրական հաշվառում կատարելու կարգը որոշվում է գործող օրենսդրությամբ:

7.5 Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկողությունն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել հիմնադրի որոշմամբ և (կամ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:

8.2 Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

8.3 Կազմակերպության լուծարման դեպքում կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Չարենցավան համայնքի բյուջե:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N 88-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Չարենցավան համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Թույլատրել աճուրդային կարգով օտարել Չարենցավան համայնքի ավագանու 18.03.2025 թվականի N31-Ա որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված ներքոնշյալ մեքենա-մեխանիզմները՝ կիրառելով գնահատված շուկայական արժեքի նվազեցում 30% չափով.

h/h	Ավտոմեքենայի տեսակը	Ավտոմեքենայի մակնիշը,տիպարը	Ավտոմեքենայի պետհամարանիշը	Արտադրման տարեթիվը	Շուկայական արժեքը	Արժեքի նվազեցում 30%	Մեկնարկային գինը
1	Մարդատար	ՆԻՍՍԱՆ TEANA	035 PP 55	2008թ.	1886 000	565 800	1320200
2	Մարդատար	ԳԱԶ- 31105120	070 LL 02	2006թ.	317 000	95100	253600
3	Մարդատար	VAZ 21213	683 LL 70	1997թ.	426 000	127800	298200
4	Մարդատար	GAZ 311000	684 LL 70	1999թ.	214 000	64200	149800
5	Մարդատար	GAZ 3110	486 LL 70	2003թ.	214 000	64200	149800
6	Կոմբայն	4LZ 2,5	8128 SL	2006թ.	1380 000	414000	966000
7	Կոմբայն	ՍԿ-5Մ	6713 SL	1985թ.	1600 000	480000	1120000
8	Բեռնատար	ZIL MMZ-4502	690 LL 70	1985թ.	1584 000	475200	1108800
9.	Բեռնատար	ZIL MMZ-4502	691 LL 70	1980թ.	976 000	292800	683200

10	Աղբատար	ZIL KO 449-10 (ZIL-4333-62)	713 SU 42	2008թ.	800 000	240000	560000

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ
Գրիգորյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մալխասյան Նորիկ
Մակինյան Վարդան
Շահգալդյան Հակոբ
Պալյան Գարիկ
Պետրոսյան Ավետիք
Պողոսյան Մնացական
Սահակյան Գառնիկ
Ստեփանյան Գարիկ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

2026թ. հոկտեմբերի 15

Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«15» հոկտեմբերի 2026 թվականի N 89-Ա

«ՍՈՒԼԻՁՈՐ-3» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐԶԱԿԱՆԻ ՄԱՐՄԱՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՍՈՒԼԻՁՈՐ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի, N 1325-Ն որոշման 28-րդ կետի, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն «ՍՈՒԼԻՁՈՐ-3» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզականի մարմարի հանքավայրի Սուլիձոր տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներին :
2. Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ
Գրիգորյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մալխասյան Նորիկ

Մակինյան Վարդան

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Ստեփանյան Գարիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N 90-Ա

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՅՈՒՐԻԿ ՄԱՅԻՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԿԴ/1774/02/25 քաղաքացիական գործով 2026 թվականի հունվարի 26-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը և քաղաքացի Յուրիկ Մայիսի Հարությունյանի 2026 թվականի մարտի 23-ի դիմումը՝ (մուտք՝ 23.03.2026թ., համար 1509/07) Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Չարենցավան համայնք, գյուղ Ֆանտան, 6-րդ փողոց, 3/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 07-067-0016-0004 կադաստրային ծածկագրով 0,3 հա հողամասը գնման նախապատվության իրավունքով օտարել Յուրիկ Մայիսի Հարությունյանին՝ 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) դրամ արժեքով (նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբեկտների):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12	դեմ-0	ձեռնպահ-10
Բաբայան Արայիկ		Բաղդասարյան Սահակ
Գևորգյան Գևորգ		Գալստյան Արթուր
Դավթյան Կարեն		Գրիգորյան Գևորգ
Եփրեմյան Բաբկեն		Թադևոսյան Նունե
Մակինյան Վարդան		Խաչատրյան Արշակ
Շահգալդյան Հակոբ		Հարոյան Լիլիթ
Պետրոսյան Ավետիք		ՂամբարյանԳարիկ
Պողոսյան Մնացական		Մալխասյան Նորիկ
Ստեփանյան Գարիկ		Սահակյան Գառնիկ
ՎարդանյանՍարգիս		Պալյան Գարիկ
Վարդանյան Նորայր		
Վարդանյան Սևակ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
«15» հոկտեմբերի 2026 թվականի N 91-Ա
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ /ԼԻԶԻՆԳՈՎ/ ՏԵԽՆԻԿԱ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 25-րդ կետերով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Չարենցավան համայնքի կարիքների համար ֆինանսական վարձակալությամբ (լիզինգով)՝ պայմանագրի ավարտից հետո Պատվիրատուի սեփականությանն անցնելու պայմանով՝ սանիտարական մաքրման և ձյան հեռացման համար ձեռք բերել տեխնիկական միջոցներ՝ մինչև 5 տարի մարման ժամկետով:
2. Չարենցավան համայնքի ղեկավարին՝
   ա. Օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և իրականացնել լիզինգի ծառայության՝ պայմանագրի ավարտից հետո Պատվիրատուի սեփականությանն անցնելու պայմանով՝ սանիտարական մաքրման և ձյան հեռացման համար տեխնիկական միջոցների ձեռքբերման գնման գործընթացը:
   բ. Գնման գործընթացի արդյունքում ընտրված մասնակցի կամ մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագիր կամ պայմանագրեր:
   գ. Պայմանագրի կամ պայմանագրերի կնքումից հետո համայնքի բյուջեի վարչական և ֆոնդային մասերում նախատեսել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ լիզինգի վճարումներն իրականացնելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ

Գրիգորյան Գևորգ

Դավթյան Կարեն

Եփրեմյան Բաբկեն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մալխասյան Նորիկ

Մակինյան Վարդան

Շահգալդյան Հակոբ

Պալյան Գարիկ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Ստեփանյան Գարիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«15» հոկտեմբերի 2026 թվականի N 92-Լ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով Չարենցավան համայնքի ավագանին՝ ***որոշում է***.

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական թիվ 3 նիստի օր և ժամը սահմանել 2026 թվականի նոյեմբերի 18-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-22 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ
Գրիգորյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն
Թադևոսյան Նունե
Խաչատրյան Արշակ
Հարոյան Լիլիթ
Ղամբարյան Գարիկ
Մալխասյան Նորիկ
Մակինյան Վարդան
Շահգալդյան Հակոբ
Պալյան Գարիկ
Պետրոսյան Ավետիք
Պողոսյան Մնացական
Սահակյան Գառնիկ
Ստեփանյան Գարիկ
Վարդանյան Նորայր
Վարդանյան Սարգիս
Վարդանյան Սևակ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

2026թ. հոկտեմբերի 15
Ք.Չարենցավան

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

Համայնքի ավագանու 84-Ա որոշման նախագծի վերաբերյալ:

Չարենցավան համայնքի ավագանու 2026 թվականի բյուջեն հաստատվել է 2025թվականի դեկտեմբերի 24-ին,ըստ համայնքի ավագանուն տրամադրված բյուջեի նախագծի համայնքապետարանի աշխատավարձի ֆոնդ է նախատեսվել 306894.0 հազ.ՀՀ դրամ. ընդ որում բյուջեի 1-6 րդ հատվածները Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրված չէ:

Կոտայքի մարզպետարան ուղարկվել է 2026 թվականի հունվարի 15-ի կայացած նիստում համայնքի 2026 թվականի բյուջեում կատարված փոփոխություններով,ըստ հրապարակված տվյալների աշխատավարձի ֆոնդը կազմել է318173.2 հազ.ՀՀ դրամ,իսկ ֆինանսների նախարարության գանձապետարանի հաշվետվության համաձայն աշխատավարձի ֆոնդը կազմել է 310859.8հազ.ՀՀ դրամ,տարբերությունը կազմում է7313.4 հազ.ՀՀ դրամ

Միաժամանակ 2026 թվականի սեպտեմբերի 18-ին համայնքի ղեկավարի թիվ 931- Ա որոշմամբ `համայնքապետարանի աշխատավարձի ֆոնդից 8000.0հազ.ՀՀ դրամ տեղափոխվել է Պարգևատրումներ դրամական խրախուսումներ սինթետիկ հաշվին,այսինքն հաստված գումարը կազմել է 58000.0հազ. ՀՀ դրամ:

Ըստ գանձապետարանի հաշվետվության առ.01.10.2026 աշխատավարձ հաստատված ֆոնդը 310859..հազ ՀՀ դրամի դիմաց կազմել է 310045.2հազ. ՀՀ դրամ կամ նվազեցվել է ընդամենը 814.6 հազ. ՀՀ դրամի չափով,կամ տարբերությունը կազմում է 7185.4 հազ. ՀՀ դրամ:Համաձայն ՀՀ ՏԻՄ օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի,որ պետք է

լինի հավաստի՝

2) համայնքի ղեկավարի և ավագանու ընդունած նորմատիվ իրավական ակտերը.

Պահանջում եմ հարցը քննարկել աշխատակազմում և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկացնել խմբակցությանը

Վերոհիշյալ տվյալները վերցված են համայնքապետարանի և մարզպետարանի պաշտոնական կայքերից:

Համայնքի ավագանու ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ խմբակցության անդամ

Ն.ԹԱՂԵՎՈՍՅԱՆ